



Չորեքշաբթի | 22 Դեկտեմբերի 2021 | 15:00

Արա Սեդրակյան

Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա

Ելույթի թեման`

Հոլի քվանտային էֆեկտի սարահարթային անցումներից մինչև ոչ-կրիտիկական լարերի տեսություն

Կներկայացվի Հոլի քվանտային էֆեկտը և էֆեկտում սարահարթերի միջև անցումների տեսությունը պայմանավորված եզրային վիճակներով: Կճևակերպվի մոդել եզրային վիճակների համար, որի շրջանակում հաշված լոկալիզացիայի ինդեքսը համակնում է էքսպերիմենտի արդյունքի հետ: Ցույց է տրվում երկու չափանի ինդուկցված գրավիտացիայի կարևորությունը պայմանավորված պատահական պոտենցիալ դաշտի արկայության հետ: Քննարվում է ձևավորված տեսության կիրառությունը Հոլի էֆեկտում տոպոլոգիական մեկուսիչների մեջ: Ցույց է տրվում պատահական ցանցերի կապը երկու չափանի պատահական մակերևույթների հետ և, հետևաբար, երկու չափանի ինդուկցված գրավիտացիայի հետ: Այս փաստը կապ է հաստատում սարահարթային անցումների տեսության և ոչ-կրիտիկական լարերի տեսության միջև: Ձևակերպվում է մոդել որը հնարավորություն է տալիս հատել $d = 1$ սահմանազատումը ոչ-կրիտիկական լարերում և քննարկել լարերի տեսությունը ռեալ, $d = 2, 3, 4$ չափողականություններում: Քննարկվում է լարերի տեսության կարևորությունը քվանտային քրոմոդինամիկայում: